Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Քարակերտի թիվ 1 միջնակարգ դպրոց » Պետական ոչ առևտրային կազմակերպության դասվարի,ինֆորմատիկայի,տեխնոլոգիայի ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար 3X4 չափսի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին » ՀՀ օրենիքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույք,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ , կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 29.02. 2024- 13.03.2024 ներառյալ ամեն օր ՝ ժամը 10:00-14:00,բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը կկայանա 2024թ. մարտի 15-ին ժամը՝14:00-ին,«Քարակերտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե Արմավիրի մարզ,գյուղ Քարակերտ, Թումանյան 2: Տեղեկությունների համար զանգահարել 094184940 հեռախոսահամարով: